## ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

### « ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (*Պ-245-27.04.2022-ԱՍ-011/0*) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

| № | Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը | Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը | Առաջարկություն (փոփոխություն, լրացում) | Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը | Առաջարկությունների ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| 1. | Հեղինակ | Նախագծի 1-ին հոդված | Նախագծի 1-ին հոդվածը հանվել է:<br>Ըստ այդմ հոդվածների համարակալումը փոխվել է՝ լրացվող հոդվածներին համապատասխան: | | Ընդունվել է: |
| 2. | Հեղինակ | Նախագծի 2-րդ հոդված | Նախագծի նոր լրացվող 1-ին հոդվածով Աշխատանքային օրենսգրքի (այսուհետ Օրենսգիրք) 118-րդ հոդվածի 1-ին մասում ՝<br><br>1) առաջին նախադասությունում «հաշմանդամության կարգի որոշումը» բառերը փոխարինել «հաշմանդամություն ունեցող անձ ճանաչելը» բառերով:<br><br>2) հանել 2-րդ նախադասությունում առաջարկվող փոփոխությունը:<br><br>3) լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր նախադասությամբ. «Հաշմանդամություն | | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ունեցող անձ ճանաչվելուց հետո աշխատողն իր աշխատանքային պարտականությունների պատշաճ կատարման կամ նույն գործատուի մոտ այլ աշխատանքի անցնելու նպատակով կարող է դիմել գործատուին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով խելամիտ հարմարեցումներ ստանալու նպատակով:»: | | |
| 3. | Հեղինակ | Նախագծի 4-րդ հոդված | «2-րդ նախադասությունում» բառերը փոխարիբնել «2-րդ պարբերությունում» բառերով: | | Ընդունվել է: |
| 4. | Հեղինակ | Նախագծի 5-րդ հոդված | 5-րդ հոդվածը հանվել է:<br>Նախագիծը լրացվել է նոր 5-րդ հոդվածով հետևյալ բովանդակությամբ՝<br>«Օրենսգրքի 244-րդ հոդվածը լրացնել նոր մասով՝ հետևյալ նախադասությամբ.՝ «7) հաշմանդամություն ունեցող անձանց համար խելամիտ հարմարեցումներ տրամադրելը:»: | | Ընդունվել է: |
| 5. | Հեղինակ | Նախագծի 6-րդ հոդված | Հոդվածի համարակալումը փոխվել է, նոր նախագծով 4-րդ հոդված: | | Ընդունվել է: |
| 6. | Հեղինակ | Նախագծի 7-րդ հոդված | Հոդվածի համարակալումը փոխվել է, նոր նախագծով դարձել է 6-րդ հոդված, իսկ «աշխատատեղի հարմարեցման ապահովումը» բառերը փոխարինել «աշխատատեղի մատչելիության ապահովումը» բառերով: | | Ընդունվել է: |
| 7. | Հեղինակ | | Նախագիծը լրացնել նոր՝ 7-րդ հոդվածով հետևյալ բովանդակությամբ. «Օրենսգրքի 250-րդ հոդվածի 5-րդ մասի «տեղահանման պլան» բառերից հետո լրացնել «, որոնք պետք է կազմվեն | | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները հաշվի առնելով» բառերը:» | | |
| 8. | Հեղինակ | Նախագծի 8-րդ հոդված | Նախագծի 8-րդ հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝<br>Օրենսգրքի 259-րդ հոդվածի վերնագրում և տեքստում «հաշմանդամների» բառերը փոխա-րինել «հաշմանդամություն ունեցող անձանց» բառերով: | | Ընդունվել է: |
| | Հեղինակ | Նախագծի 9-րդ հոդված | Նապագծի 9-րդ հոդվածը«մտնում» բառից հետո լրացնել «պաշտոնական» բառով: | | Ընդունվել է: |

**Հանձնաժողովի նախագահ** **Հերիքնազ Տիգրանյան**